

(Ալիշան, Հայաստ. էջ 520):

* * *

ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրչագիրներու զարգը կազմող պատկերներու վրան կամ որեւէ մէկ անկիւնը ստորագրութիւն ղնելու սովորութիւնը մեզ մօտ անծանօթ էր:

Այս պատճառով անյայտ են մնացած բազմաթիւ վարպետներ, որոնք պատրաստեր են մագաղաթը, հատորին կազմը, կողքը ծածկող կաշի, փղոսկր, ոսկի, արծաթ պատեանները, քանդակները, պատկերացումները, թանկագին քարեր ընդելուզողները եւն. մի խօսքով՝ հայ գրքի գեղարուեստին բազմաթիւ վարպետները: Գրիչները եւ նկարիչները՝ իրենց գործերու յիշատակարաններուն մէջ միայն յիշատակած են իրենց մասին՝ հետեւեալ բնորոշ կերպերով:

*

«Ձեռամբ բազմամեղ եւ անարհեստ գրչի ստանուն Յովհաննէս երիցայ»:

*

«Ձեռամբ անարհեստ եւ անիմաստ գրչին եւ անարժան յոգւոյ Ներսէսի միայն անուամբ սարկաւազի եւ ոչ գործով»:

*

«Ձծաղկող սաղմոսարանիս գնուաստանուն Մեկքիսէղ մոկացի»:

*

«Ձեռամբ անարժան Ընդլիճան սարկաւազի»:

*

«Ձանսուրբ գծողս զԿարապետ յիշեսջիք»:
«Ձեռամբ ամենամեղ քահանայ Ստեփաննոսի»:

*

«Շս մեղաւոր Աճամ Գրիգոր»: եւն. եւն.:

* * *

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հայ գրքի մասին այսքան բան ըսելէ ետք՝ կարելի է հարց առլ, թէ մեր երկրի մէջ մատենագրաններ եղե՞ր են:

Ճշմարիտ է, որ մատենագրանը, այնպիսին ինչպէս դուք սովոր էք տեսնել այսօր, ես չեմ պատահած մեր աւերակած երկրին մէջ:

Բայց ատոնք գոյութիւն ունեցած են մեր մեծահռչակ վանքերէն Սանահնի, Սաղմոսայ վանքի, Հոռոմոսի, ինչպէս նաեւ Տաթեւի, Հաւուց Թառի, Էջմիածնի, Ս. Կարապետի, Կիլիկիոյ տասնեակ մեծ մենաստաններէն Գրապարիկի, Հոռոմիլայ, Կոներու, Մլիճի, Աննաբու, Սսի, Արքակաղնի, Ի վերջոյ, Վարազի ու Ալթամարի վանքերուն կից:

Հայ ճարտարապետութեան կոթողներու շարքին այս գլուխ-գործոց կառուցուածքներու մէջ մատենագրանները խորապէս սրտազբաւ բաներ են:

Անոնց մէջ կը գգայ մարդ արուեստի համար ծնած մարդու հոգու քնքշութիւնը:

Հայ ճարտարապետութեան աւանդական սրբատաշ կոփածոյով կերտուած եւ գիծերու ազնուական ու խելացի մէկ պարզութեան հետ զմայլելի կերպով ներդաշնակուող զուսպ ու քիչ քանդակազարդութիւնով այդ միաւորներու կամարներու տակ՝ ուր՝ հազա՛ր տարի եկած ու գացած մեր հարազատներ, Աստուածը փառարանելու հաւատքով աշխարհն ու բնացեր ու տքներ են հայ անուան վարկի համար՝ վազո՛ւց է որ չի լսուիր գրչի եւ արուեստի վաստակաւորներուն լուռ երկունքը արտայայտող հառաչը ... Անոնց մէջ եղեր են այնպիսիներ որ ամէն անգամ որ Արարչի անունը պիտի գըրէին, մի ըսպէ ինքնամփոփ՝ «գգեգ Աստուած փառաքանեմք» մը կը մըմնջէին՝ յետոյ նորէն շարունակելու համար անհատում գործը...:

